



“ԲԱՂ ՏՈՒՆԻՔ ՄԱՆԻ ՏՆՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԳՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԻԳ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 1, 1894

ԹԻՒ 10

ՀՆՈՒՈՒՆ ԵԿՈՂ ԹՆԴԻՒՆԸ

Անցած ամիս պատկեր մը դրինք շոգ ենաւի մը որ Անգղիոյ Տոլլըր քաղաքին մօտ դանուող կուտ ուինի Աւագներուն վրայ նստած էր : Այս երեսին պատկերին մէջ տեսնուած երեք մարդիկը նաւապետներ են փրկանաւերու, որոց պաշտօնն է այդ վտանգաւոր ծովեզրին վրայ նաւաբեկութեան հանդիպող նաւաստիներուն օգնութեան երթալ : Այս պատկերներուն համար կ'ըստի թէ այդ երեք մարդոց ճշգրիտ նմանութիւնն են : Նաւապետ Բոպըրթս, որ մէջտեղինն է, իր ընկերներուն ուշադրութիւնը կը հրաւիրէ՝ հեռաւոր նաւի մը մէջէն իբրև վտանգի նշան արձակուած թնդանօթի մը ձայնին : Քաջ մարդիկը միայն կ'ուզեն գիտնալ թէ իրենց օգնութեան կարօտ եղողներ կա՞ն, որպէս զի իրենց նաւաստիները հրաւիրեն նաւաները մտնելու և կուտելու այլքներուն հետ, կամ ընելու ուրիշ ինչ բան որ կրնան ընել, ազատելու համար զանոնք որոց կեանքերը վտանգի մէջ են :



ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԲԱՐԻ ԳՈՐԾ ՄԸ

Քանի մը տարի առաջ կիրակի առաւ մը քարոզիչ մը կիրակնօրեայ դըպրոց կ'երթար : Եանեի փողոցներէն անցնելէն ետքը երբ անկիւնէ մը կը դառնար, տեսաւ խումբ մը փոքր աղայք որ ջրհանի մը բոլորափքը մարմարին գնդակ կը խաղային : Տղայքը, երբ տեսան քարոզիչը, անմիջապէս սկսան գնդակները ժողվել և փախել ուղափոխ շատ որ կրնային : Փոքրիկ աղեկ մը, միւսներուն չափ շատ չտեսներով գնաւ, չկրցաւ անոնց չափ շատով փախել :

և մինչդեռ կը ժողվէր իր մարմարին գնդակները, քարոզիչը շատ մօտ գալով ձեռքը անոր ուսին վրայ դրաւ : “Բոլոր գնդակներդ ալ գա՞մ” : “Չէ,” ըսաւ աղան, “չգտայ” : “Ո՛րքեմն քեզի պիտի օգնեմ որ բոլորն ալ գա՞ն” : Ասոր վրայ ծագեցաւ և սկսաւ մարմարին գնդակները փնտռել, և մինչ այսպէս կ'ընէր, ըսաւ, “Երբ փոքրիկ աղայ էի՛ շատ կը սիրէի մարմարին գնդակ խաղալ, և կարծեմ քեզ կրնայի կիծել : Սակայն երբեք չէի խաղար կիրակի օրերը : Եթէ հետս


գաս, կարծեմ քեզի բարիք կրնամ ընել” : “Չե՞ս քերս աղտոտ են : Ինտո՞ր գամ” : “Հոս ջրհան մը կայ : կրնաս լուալ” : “Այնչափ պղտիկ եմ որ չեմ կրնար մի և նոյն ժամանակ թէ՛ ձեռքերս լուալ և թէ՛ ջրհանով ջուր քաշել” : “Եթէ գուն լուսա՞ ես ջուր կը քաշեմ” : Քարոզիչը անմիջապէս սկսաւ ջրհանով ջուր քաշել, և փոքրիկ աղան ձեռքերը և երեսը լուայ մինչև որ ձիւն դարձան : “Չե՞ս քերս և երեսս թայ են, ի՞նչպէս չորցնեմ” : Քարո-

զիչը իր թաշկինակը հանեց և աղուն տուաւ :
 «Այս շատ մաքուր է, մեղք է» : «Այո, սա-
 կայն աղտոտելու համար շինուած է» : փոքրիկ
 տղան ձեռքերը և երեսը սրբեց, յետոյ քա-
 լաղիչին հետ կիրակնօրեայ դպրոց գնաց :

Քսան տարի ետև, այս քարոզիչը քաղաքի
 մը փողոցներուն մէջ քայլած ատեն, բարձր
 հասակով մարդ մը անոր ուսին դպաւ, և ե-
 րեսը նայելով, ըսաւ, «Ձիւ չէ՞ս ճանչնար» :
 «Ոչ» : ըսաւ քարոզիչը, «չեմ ճանչնար» : «Կը
 յիշե՞ս թէ քսան տարի առաջ դատար տղայ մը
 որ ջրհանի մը քովը մարմարիոն գնդակ կը խա-
 ղար : Կը յիշե՞ս թէ այդ տղան այնչափ ազտոտ
 էր որ կ'ամչնար կիրակնօրեայ դպրոց երթալ :
 և թէ անոր համար ջրհանէն ջուր քաշեցիր,
 անուշութեամբ խօսեցար անոր հետ և կի-
 րակնօրեայ դպրոց տարիր զնա» : «Ո՛հ» : ըսաւ
 քարոզիչը, «կը յիշեմ» : «Ես այդ տղան եմ :
 Առևտուրի մէջ բազդս բանեցաւ, և յաջող
 մարդ մը եղայ, և այսօր փողո-
 ցին մէջ քեզ տեսնելով՝ պարտա-
 ւորութիւն սեպեցի դալ և ըսել
 քեզ որ քու մարդասիրութեանդ
 կը պարտիմ Աստուծոյ առջև
 այս բոլորը» :

ՀԵՐՆՀՈՒԹ

Այս Աւետիքեան Մայիս ամսուն
 թիւին մէջ գրինք կոմս Յինցըն-
 տորֆի պատկերը և տունը ա-
 նոր կեանքին վրայ կարճ տեղե-
 կութիւն մը : Այս երեսին վրայի երկու պատ-
 կերները կը ներկայացնեն տեսարաններ Հէրն-
 հոթի մէջ որ կոմս Յինցընտորֆի Ժողովուր-
 դին, Մորավեաններուն, գլխաւոր բնակավայրն
 է : Հէրնհոթ կը գտնուի Մաքսոնիոյ մէկ գեղե-
 ցիկ մասին մէջ որ ծառերով ծածկուած է և
 ունի առատ ջուր : 1721ին էր որ Մորավեան-
 ները պաշտպանութիւն գտան կոմս Յինցըն-
 տորֆի կողմէն. և այն կացինը որով, 1722ին,
 Հէրնհոթի գաղթականութեան համար կը ա-
 բուցուէր առաջին ծառը՝ դեռ կը պահուի այդ
 տեղի թանգարանին մէջ : Առաջին պատկերը
 կը ներկայացնէ կոմսին նախկին բնակարանը,
 որուն մէջ Մորավեան Եկեղեցիին երէցները հի-
 մա շաքաթը երեք անգամ կը գումարին՝ ե-
 կեղեցիին խնդիրներուն վրայ խորհրդակցելու
 համար : Այդ տեղին մէջ գտնուող ուրիշ շէնք
 մին է «Այրի կանանց Շէնքը», ուր կը բնակին
 80է 100 տղայի կիներ, որոց շատերը մինչ ի-
 րենց էրկինները ողջ էին՝ անոնց հետ
 աշխատած են օտար երկրաց միսի-
 նարութեան դաշտերուն մէջ : Ասոր
 մտ կը գտնուի «Քայրերու Շէնքը», ո-
 րուն մէջ 130 շտամուսնացած կիներ
 կ'ապրին մէկտեղ : Կայ նաև «Եղբայր-
 ներու Շէնք»՝ մը ուր կը բնակին 30
 շտամուսնացած մարդիկ որ ունին հասա-



ՅԻՆՑԵՆՏՈՐԻ ԵՐԵՒԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԸ



ՀԵՐՆՀՈՒԹԻ ՄԵՆ ԳԵՐԱՄԱՆ

բակաց ննջարան մը և ճաշարան
 մը : Վարի պատկերին մէջ կը տեսնուի
 գերեզման մը որուն մէջտեղի ծառ-
 ուղիին մէկ կողմը կը թաղուին այր
 մարդիկ, և միւս կողմը կին մարդիկ, և
 մեռելներուն վրայ կան հաւասար մե-
 ծութեամբ պարզ, սափակ քարեր :
 Մորավեաններուն ամենէն մեծ արժա-
 նիքն է իրենց միսիոնարական մեծ գոր-
 ծունէութիւնը : Թէև փոքր մարմին մըն
 են, սակայն 1732էն ի վեր աշխարհի
 այլ և այլ կողմերը զրկած են 2,300
 միսիոնար, և միսիոնարական դաշտե-
 լու մէջ հիմա անոնց ունեցած մարդե-
 լուն և կիներուն թիւն է իբր 300 :

ԹՈՐԻՉԵԼԼՕ

Գայիլէոսի աշակերտներէն մին էր Թորիլէլլօ որ մեռաւ 1647ին, 39 տարեկան ծաղիկ հասակին մէջ. Գայիլէոսէ ետքը մաթեմատիքայի փրօֆէսոր եղաւ Ֆիրենցայի մէջ. բայց զինք հոշակաւոր ընող զլուստոր բանն է իր ջերմաշափի գիւտը:

ԹՈՒՄԻԿԻՆ ԽԵԼՔԸ

«Այս առտու մարդագետինը փորեցի, և, Թումիկ, կ'ուզեմ որ մէջի քարերը դուն ժողովես կէս օրէն ետքը» ըսաւ Պրն. Կարապետ իր տղուն օր մը ճաշի առնն: Թումիկ բան մը չըսաւ, բայց երեսը կախեց, և կերածը կոկորդէն վար չդնաց: «Գեաինին արեւմտեան կողմը նետէ ժողված քարերդ և կ'աղատինք անոնց մէ», շարունակեց իր հայրը, մինչ ֆէրը կը գնէր գործին դառնալու: «Շատ աղէկ», ըսաւ Թումիկ: Հայրը գնաց, և Թումիկ սկսաւ տրտնջալ: «Մամուէլին տունը պիտի երթայի կէս օրէն ետեւ, նաւակը չինելու», ըսաւ իր համակիր մօրը: «Ես կը կարծէի թէ այդ մարդագետինը պիտի չփորուէր մինչև գալ շարթու»: «Եթէ անմիջապէս սկսիս, շուտ մը կ'ընաս լինցնել և ժամանակ կ'ունենաս Մամուէլին երթալու ալ», պատասխանեց իր մայրը: «Եթէ մինակ ընեմ» մինչև իրիկուն պիտի չկրնամ լինցնել», ըսաւ Թումիկ տրտնալով: Մայրը ա՛լ բան չըսաւ, և սկսաւ պնակները լուալ:

Թումիկ դուրս ելաւ, և սկսաւ ժուռ գալ պարտէզը, ձեռքերը զրպանը: Կայնեցաւ դիտելու ծերուկ հաւ մը որ իր ձագերը քօլը կը կանչէր. անմիջապէս Թումիկին միտքին մէջ դադափար մը փայլատակեց. «Գիտեմ ինչ պիտի ընեմ», ըսաւ, և այնչափ բարձր ձայնով որ հաւը և ձագերը սարսափահար տատնըմէկ կողմ փախան: Տուն վազեց՝ երկու վայրկեան առաջ ունեցածէն բարձրովն տարբեր դիտաւ որովթեամբ:

«Մամուէլին պիտի երթամ», ըսաւ իր մօրը: Մայրը անոր վրայ նայեցաւ, և տեսաւ որ շարածճի փայլ մը կար անոր թուխ աչքերուն մէջ: «Շատ աղէկ, միայն, Թումիկ, գիշերը վրայ չհասած այն գործը պիտի ընես»: «Այո, մայրիկ», ջանալով շուրջ կերպարանք մը առնել, թէ և քթին տակէն կը ինդար: Ժամ մը ետքը եկաւ սեղանատուտը ուր իր մայրը կար կը կարէր, և մօրը քօլ նստաւ ու սկսաւ շողքորթել զնա: «Մայրիկ, ընկեր-

ներէս մէկ քանին իրիկու: ան կերակուրի հրաւիրեմ և քանի մը տաքուկ կարկանդակ կ'եփեմ մեզի: Հայրիկը գիւղ կ'երթայ և գիշերը տուն կը դառնայ, այնպէս որ չգիտնար»: «Կարծեմ կ'ընաս ուղածը ընել, արդէն ես պիտի եփէի կարկանդակ, և քանի մը հատ աւելի կ'եփեմ»: Չհարցուց թէ ինչո՞ւ կ'ուզէր ճողի հրաւիրել տղաքը, բայց գիտէր թէ պայծառ ծրագիր մը ունէր իր դաւակը, և մայրական յօժաբութեամբ պատրաստ էր օգնել անոր: Նոյն առնն կը դիտէր զնա հետաքրքրութեամբ: Քիչ մը ետքը տախտակ սղոցելու ձայն առաւ մտանէն, յետոյ Թումիկ իրեն եկաւ և քիչ մը կար-



ԹՈՐԻՉԵԼԼՕ

միր ներկ ուզեց: Տղաքը իրիկուան ժամը տասնին եկան, ինչու որ այդ ժամուն հրաւիրեր էր զանոնք Թումիկ: Թումիկէ զատ չորս հոգի կային: Թումիկին մայրը խոհանոցին պատահանէն դուրս նախելով տեսաւ որ իր տղան մարդագետինը կը սանէր զանոնք: Մարգագետինին արեւմտեան կողմը տեսաւ պայծառ բան մը որ քարէ պատին վրայ կեցած էր, սակայն չգիտցաւ անոր ինչ ըլլալը: Յետոյ տեսաւ որ տղայք ծռեցան և զրպաննին քարով լեցուցին: Յետոյ մէկ գիծի վրայ շարուելով սկսան քարերը կարգաւ այդ պայծառ առարկային նետել: Շարունակ կը նետէին, քիչ քիչ այդ նշանին աւելի մտանալով: Նոյն միջոցին ինք եփեց համով կարկանդակները, և խնդաց ինքնիրեն: Ժամը տասներկու քին, հինգ փոքրիկ քարով նշան առնողները վազելով իրիկուան կերակուրի եկան,

քրտնած ու փոքերնին անօթի:

«Նշանակեալ լաւ էր, Թումիկ», ըսաւ տղոց մին: «Ուրի՞շ գտար»: «Ես չինեցի», ըսաւ Թումիկ անմիջապէս: Նաւակէն քիչ մը ներկ մնացած էր, անով ներկեցի զայն: Մինչ կերակուր կ'ուտէին, Պրն. Կարապետ առնն դարձաւ. երբեք չէին սպասեր որ այդ ժամանակ պիտի գար: Ամենուն հետ անուշութեամբ խօսեցաւ, յետոյ Թումիկի դառնալով, ըսաւ, «Մայր կէս օրէն ետեւ մարդագետինին քարերը ժողվեցի՞ր ըսածիս պէս, և արեւմտեան կողմը նետեցի՞ր, Թումիկ»: «Այո, հայր, նետեցինք», ըսաւ Թումիկ լրջութեամբ, մինչ միւս տղայք, խաղը հիմա հասկնալով, խնդալ մը փրցուցին:

ՄԻ ՅՈՒՍԱՀԱՍՏԻՐ, ԱՅԼ ԶԱՆԱ՝

Իռլանտայի հիւսիսային կողմը ճամբորդող մարդ մը մանուկներու ձայներ առնելով կեցաւ ու մտիկ ըրաւ: Գտաւ որ այդ ձայները կու գային փոքր դպրոցէ մը, և մօտեցաւ անոր: դուռը բաց ըլլալով, ներս մտաւ մտիկ ընելու տղոցը հեղած բառերուն:

Տղեկ մը անոնցմէ զատ կեցած էր, և տրտում ու վհատեալ ելուելով ունէր: «Ինչո՞ւ այդ տղան հող կայներ է», հարցուց մարդը: «Բանի մը չգար», պատասխանեց վարժապետը, «բան մը չկրցայ սորվեցնել իրեն, մարդ ըլլալը չունի: Ի պրոցին ամենէն

պաւուշ տղան է»: Մարդը զարմացաւ անոր այս պատասխանը լսելով: Տեսաւ որ վարժապետը այնչափ խիտաւ և բիրտ էր որ պզտիկ և երկչոտ աշակերտները կը դողային իրենց ստակումէն: Անոնց քանի մը խօսքեր ուղղեց, և յետոյ, ձեռքը անոնցմէ զատ կայնող տղուն վեհ ճակատի վրայ դնելով, ըսաւ, «Բանի մը օրէն լաւ աշակերտ մը կ'ընաս ըլլալ: Մի յուսահատիր, տղաս, այլ ջանա, և դարձեալ ջանա»:

Տղուն վրայ ոգևորութիւն եկաւ: Իր քնացող հանճարը արթնցաւ: Նոր նպատակ մը կազմեց: Այդ ժամէն՝ ուսումնասէր եղաւ և իր ընկերները դերազանցելու փառասիրութիւնը ունեցաւ: Եղաւ մեծ գիտնական մը, և Սուրբ Գիրքին հանրածանօթ մեկնութեան մը հեղինակը. մեծ և բարի մարդ մը, ամենուն սիրելի ու յարգելի: Եղաւ Տր. Էսթրմ. Գլարք:

ԳԻՍՏԱՆԻ ԳՈՐԾ ՄԸ

Գիտական թերթ մը պատմութիւն մը կ'ընէ գորտի մը խնկրին վրայ : Խուճը մը հաւու ձագեր կը կերակրուէին ամաններու մէջ դրուած խմորով սը երբ քիչ մը թթուէին շատ մը ճանճեր կը ժողվէին իրենց վրայ : Գորտ մը, կ'երևայ թէ ասիկա դիտելով, ամէն օր իրիկուան դէմ բակը կ'երթար, խմոր պարունակող մէկ ամանին մէջ կը ցատկէր և մէջը կը թապակէր մինչև որ լաւ մը թաթխուէր խմորով : Ետքը տեղ մը հանդարտ կը նստէր : Ճանճերը թթուած խմորի հոտ առնելով, շուտով հնարագէտ գորտին բոլորտիքը կը խռնուէին : Ե երբ որ ճանճ մը շատ մօտ գար գորտին քիթին, գորտը կայծակի արագութեամբ լեզուն դուրս կը հանէր և ճանճը կտկորդէր վար կը դրկէր : Այս հնարքով գորտը լաւ գործ կը տեսնէր :

«ԲՈՒՈՐԸ ԱՒԻՅՑ ԼՄՆՅՈՒՅՑ»

Թերևս միտեալ ենք չափազանց կարևորութիւն տալ ստակ դիպելու և խնայողութեան : Մակայի առանց ազնիւ նպատակի և լաւ գործածութեան, այս յատկութիւնները շուտով պիտի նուաստացնեն մեզ՝ փոխանակ ազնուացնելու :

Ազարակապեա մը օր մը ճոն Ուէսլիի քարոզ մտիկ ընելու դնաց : Շատ անպիտիկ էր կրօնքի մասին : Այսու հանդերձ գէշ մարդ պիտի չկուէինք զնա : Շուտով իր ուշադրութիւնը դարձուցաւ քայտզէն : Ուէսլի ըսաւ թէ խորհրդածութեան համար պիտի առնէ երեք նիւթ, որ գլխաւորաբար ստակի վրայ են :

Առաջին նիւթն էր, «Գիղէ որչափ որ կրնաս» :

Ազարակապեառ դպաւ քովի մարդուն և ըսաւ, «Այս շատ տարօրինակ քարոզ է : ասանկ քարոզ լսած չէի : Այդ մարդը գլուխ ունի : սքանչելի կը քարոզէ :» ճոն Ուէսլի խօսեցաւ աշխատասիրութեան, աշխուժութեան, նպատակի մը համար ապրելու վրայ, և հասաւ երկրորդ նիւթին,

«Կրցածիդ չափ քիչ ծախսէ :»

Ազարակապեառ աւելի ոգևորուեցաւ : «Ատոր պէս քարոզ լսուած է», ըսաւ : Ուէսլի պախարակեց չափաւորութիւնը, և խայտառակեց կամայ դեղխուժիւնը : Ազարակապեառ կը մտածէր ձեռքերը չփելով, «Ասոնք ամենը մանկութենէս ի վեր պահէր եմ» : Ե թէ դիպելու և խնայողութիւն ընելու մասին փրկութիւն եղած էր իր տանը : Մակայն Ուէսլի եկաւ երրորդ նիւթին, «Կրցածիդ չափ տուր» :

«Աս չեղաւ, գնաց բոլորը արեց լնցուց», ըսաւ ազարակապեառ :

ԳԱՋ ՏՂԱՅ ՄԸ

Ամէն երկրի մէջ կը գտնուին շատ մը դժբաղդներ որ կորսնցուցած են իրենց աչքին տեսութիւնը կամ իրենց սրունքներէն մին կամ երկուքն ալ : Կը մեղքընանք զանոնք, սակայն միշտ մարդասիրութիւն չէ անոնց ստակ տալ, վասն զի քաջալերած կ'ըլլանք զանոնք՝ մուրալով ապրուստին հանելու : Շատ աւելի աղէկ է անոնց ներսի դին ծնուցանել քաջ սիրտ մը որով բոլոր կարողութեամբ աշխատին իրենց հացը հանելու : Մեր բնակած քաղաքին մէջ մարդ մը կը ճանչնայինք որ այս ոգին ունէր, և ամէն մարդէ կը յարգուէր : Հետեւեալ պատմութիւնը Մր. Տաուլինկ անուն Ամերիկացի երիտասարդի մը վրայ է որ նմանօրինակ քաջութիւն կը ցուցնէ :

Մր. Տաուլինկ զարմանալի մարդ մըն է : Իր կենաց պատմութիւնը բոլորովին տարբեր է սովորական մահկանացուներու կենաց պատմութիւններէն : Քսանրութիւն տարու է, և իր զօրաւոր կազմին վրայ կը կրէ բարեձև գլուխ մը, և երես մը որ կ'արտայայտէ թէ՛ քաջութիւն և թէ՛ բարեպիտոյթիւն : Մասաչուսէց նահանգին մէջ ծնած է, և տասնընիւց տարեկան եղած ատենը Միացեալ Նահանգներուն արևմտեան մասին մէջ կովկարած էր : Օր մը մինչ այսպէս զբաղած էր, սակալի փոթորիկի մը բռնուեցաւ, և գիշերն ալ վրայ հասնելով, մութին մէջէն խարխափելով հոս հոն կ'երթար մինչև որ դէմը ելաւ փայտի դէզմը որ մանր մանր կտրուած էր վառարանի գործածուելու համար : Խորհելով թէ մօտը տուն մը ըլլալու է, սկսաւ փայտի կտորները չորս կողմը նետել տունին զարնելու և մէջիններուն ուշադրութիւնը իր վրայ դարձրնելու համար, բայց առանց յաշուութեան : Յետոյ գիկը փայտով լեցուցուց և սկսաւ քայլել, հոս հոն նետելով զանոնք մինչև որ բոլորն ալ հատան, բայց դարձեալ առանց արդիւնքի : Հետեւեալ օրը սառած դտան զնա և այնչափ գէշ կերպով որ երկու սրունքներն ալ կտրուելու էին ծունկերէն, ձախ բազուկը՝ արմուկէն, աջ ձեռքին բոլոր մատերը՝ յօդուածներէն և բժամատուր՝ առաջին յօդուածէն : այնպէս որ իրեն կը մնար միայն բժամատուր մը վարի մասը և առանց մատի ձեռքը :

Երբ այս դժբաղդութիւնը իր վրայ եկաւ, ունէր եօթը հարիւր տղար (կըր 160 ոսկի) հնչուն դրամ, երեք ձի և քանի մը կով : Ամէն բան յատկացուց

բժիշկին վարձքը վճարելու, և թէ՛ մարմնոյ թէ՛ ստակի կողմանէ խեղճ վիճակի մէջ՝ օգնութիւն խնդրեց իր երկրացիներէն : Թէ անմասն կորով ունէր, ընթերցողը երբեք պիտի չտարակուսի երբ իմանայ թէ իր երկրացիներուն առաջարկեց որ եթէ զինք դպրոց զրկեն իրենց վրայ ա'լ բեռ չըլլար : Մին երեք մեծաւորներէն որոց գիտած էր, կը փափաքէր զնա գնել ազարակ մը ուր քիչ ծախքով բնակի և անուցուի : սակայն միւս երկուքը տարբեր խորհեցան, և վերջապէս դժբաղդ տղան դպրոց մը զրկուեցաւ ուր լաւ դաստիարակութիւն մը ստացաւ և եօթը տարի յաջողութեամբ դաս տուաւ : Երկու արհեստական սրունքներով ու տոքերով և արհեստական բազուկով մը՝ լաւ երևոյթ մը ունէր : Գեղեցիկ դիր ունէր, և ամէն օր տակար գործ ընել կու տար իր կոշտ ձեռքին : Քիչ մը ետքը՝ զգալով թէ իր առողջութեան համար լաւագոյն է ընել այնպիսի գործ մը որ պարտելու առիթ մայի բնէն՝ լրագրութեան գործի մէջ մտաւ և զրկուեցաւ հանքերուն մէջ աշխատողներուն քով, անոնց չարքաշ կեանքին վրայ դրելու : Հանքագործները միշտ աղէկ կը վարուէին իր հետ և ամէն տեղ կարեկամ կը վստահէր :

Անգամ մը մինչ Սան Ֆրանչիսկոյի մէջ ընկեր լրագրի մը հետ կը խօսակցէր, տեսաւ որ քիչ մը անդին իրեն կը մօտենար միայն մէկ բազուկ ունեցող մարդ մը որ քիչ մը ստակ խնդրեց իրմէ՝ ըսելով թէ շատ նեղուած է, և այդ օրը բան կերած չէ : Մր. Տաուլինկ անոր հետ ճաշարան մը դընաց և ըսաւ անոր որ ուզած կերակուրը ուզածին չափ ուտէ : Երբ ուտելը լնցուց, Մր. Տաուլինկ անոր քիչ մը ստակ տուաւ, նաև տուաւ անոր քանի մը խրատ : Ըսաւ որ աշխատի : Մարդը պատասխանեց, «Միայն մէկ բազուկ ունեցողին համար շատ դժուար բան է գործ գտնել» : Յայնժամ Մր. Տաուլինկ իր բազուկը շոշափել տուաւ անոր, և թեքելը մէկդի ընելով ցուցուց անոր թէ ինչէ՛ շինուած էր : «Հիմա», ըսաւ նա, «չօչափէ այս սրունքը», և մարդը այնպէս ըրաւ : «Հիմա շոշափէ միւս սրունքը և այս ձեռքին վրայ նայէ : Հիմա ըսելիքս այս է որ աշխատիս» :

Եւ մարդը խոյս տուաւ, շատ զարմացած ու անկցած :

Ամերիկայի Միութեան Կոնգրէսի կողմէն
Արտօճատել
Տնօրէն—Միլամոս
Ֆինանսներու Եղբայրներու Կոնգրէսի կողմէն

ԿՈՍՏԱՆԴՆՍԻՆ
Ի ՏԳՐԱՆԻ ԱՍՏՈՆՆԵՐ